ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Բնություն-մարդ-հայրենիք կապը՝ Համո Սահյանի ստեղծագործություններում

ԱՌԱՐԿԱ՝ Հայ գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Սվետլանա Մնացականյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Քարաշենի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Սոնա Կամոյի Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....4
ԲՆՈՒԹՅՈՒՆ-ՄԱՐԴ ԿԱՊԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ....18
ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Համո Սահյանը՝ հայ ականավոր բանաստեղծը, հեղինակ է այնպիսի ստեղծագործությունների, որոնք մարդու, բնության և հայրենիքի բարդ հարաբերությունների խորը պատկերացումների արձագանքներն են: Իր գրական բեղմնավոր գործունեության մեջ Սահյանը անդրադառնում է հայկական բնապատկերներին՝ միահյուսելով հուզիչ պատմություններ, որոնք առնչվում են մարդկային գոյության էությանը: Այս հետազոտությունը փորձում է ուսումնասիրել Սահյանի բանաստեղծական աշխարհը՝ կենտրոնանալով բնություն-մարդ-հայրենիք ամուր կապի վրա:

Համո Սահյանի ստեղծագործությունները բնութագրվում են պատկերային և հուզական հարուստ աշխարհով: Բնությունը մարդկայնացնելու կարողության շնորհիվ զուգահեռներ անցկացնելով բնության երևույթների, մարդկային ներաշխարհի և ազգային ինքնության միջև՝ հեղինակը հրավիրում է ավելի մանրամասն քննության առնել իր գրողական յուրահատուկ մոտեցումը:

Նպատակ և խնդիրներ: Այս հետազոտության նպատակն է համապարփակ վերլուծության ենթարկել Համո Սահյանի պոեզիան՝ կենտրոնանալով բնաշխարհի թեմայի և բնություն-մարդ կապի հեղինակային մտորումների վրա:

Հետազոտության **խնդիրներն են՝**

1. վերլուծել սահյանական բնաշխարհը, ուսումնասիրել, թե ինչպես են մարդու և բնաշխարհի միջև ներդաշնակ հարաբերությունները հաղորդվում:

2. ներկայացնել Սահյանի նվիրվածությունը հայրենի բնաշխարհին՝ վերլուծելով, թե ինչպես է նա այն օգտագործում որպես կտավ՝ անդրադառնալու հայ ժողովրդի պատմական պայքարին և անսասան ոգուն:

Օբյեկտ և առարկա: Սույն հետազոտության **օբյեկտը** Համո Սահյանի պոեզիան է, **առարկան՝** այն ստեղծագործությունները, որոնք արտացոլում են բնություն-մարդ-հայրենիքի կապը:

Մեթոդ: Հետազոտությունն իրականացվել է **գրական երկի քննության համակարգային ու ամբողջական վերլուծության** սկզբունքներով:

ԲՆՈՒԹՅՈՒՆ-ՄԱՐԴ ԿԱՊԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեծ գեղանկարիչ Մարտիրոս Սահյանն ասել է. «Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ»: Հ. Սահյանի պոեզիան դրա վառ արտահայտությունն է:

Բանաստեղծը երկար ճանապարհ է անցել՝ իրեն բնության մի մասնիկը զգալու ու նրա միջոցով հավերժանալու համար: Ինչպես ինքը՝ Սահյանն է խոստովանել՝ սկզբում նա բնությունը տեսել, զգացել է իր միջոցով, ապա հասուն տարիներին ձգտել է իրեն հասկանալ բնության միջոցով: Սա մի ամբողջ թռիչք է նրա բանաստեղծական մտածելակերպի մեջ:

Ընթերցողը Հ. Սահյանի բանաստեղծությունն առաջին հերթին սիրում ու գնահատում է անմիջականության, ծանոթ ու հարազատ, անչափ կենդանի ու գունեղ պատկերաշարի, ապրումների ու զգացմունքների ներկայացման, պարզության ու հոգեբանական խորության համար:

«Որոտանի եզերքին» առաջին ժողովածուն կազմված էր ռազմաճակատում գրված գործերով, սակայն պատերազմի հերքումն էր՝ խաղաղ իրականության պատկերներով:

«ՆԱԻՐՅԱՆ ԴԱԼԱՐ ԲԱՐԴԻ» բանաստեղծությունը համակված է «Որոտանի եզերքին» թողած հարազատների ու հայրենի եզերքի կարոտով.

Նազում ես ու շորորում զմրուխտյա քո շորերում,
Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի,
Քո կանչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռու՛, հեռու՛ Նաիրյան դալար բարդի:

Բանաստեղծության միայն վերջին քառատողն է հիշեցնում պատերազմի մասին, ուր բանաստեղծը շեշտում է հայրենիքի համար զոհվելու իր պատրաստակամությունը:

Կմեռնեմ, միայն թե դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռու՛, հեռու՛ Նաիրյան դալար բարդի:

Հ. Սահյանի ստեղծագործության մեջ այնքան մեծ ու հաստատուն տեղ է գրավում բնությունը, որ բանաստեղծի արժեքավորման անբաժան մակդիրն է դարձել «բնության երգիչ» անվանումը: Սահյանը ոչ թե ծվարում է բնության գրկում, այլ բնության մեջ ընդգծում է մարդու առկայությունը:

«Բնությունը հասկանալու համար պետք է շատ մոտ լինել մարդուն, և այդ ժամանակ բնությունը հայելի կլինի, որովհետև մարդը բովանդակում է իր մեջ

ամբողջ բնությունը»,-գրում է Միխայիլ Պրիշվինը՝ ռուս գրականության մեջ բնության ամենամեծ գիտակը:

Սահյանը մոտ է կանգնած բնությանը, սակայն առավել մոտ է նրա հոգուն մարդը՝ իր վշտերով ու հույզերով, թռիչքներով ու անկումներով, երկմտանքով ու սխրանքներով.

Դու հողածին, դու և աստված,
Դու և հաղթող, դու և պարտված,
Դու անտակ վիհ, դու և բարձունք:
Դու բնության անքննելի,
Եվ բնության մի պատառիկ,
Դու հնության հնամենի
Ու դեռ գալիք:[1]

Բնություն և մարդ՝ սա է Հ. Սահյանի բանաստեղծական տարերքը:

Սահյանը մարդկայնացնում է բնությունը՝ նրա մեջ տեսնելով մարդկային էության դրսևորումները, և ձգտում է բնության և երևույթների միջոցով արտահայտել մարդկային կյանքը:

Մարդը, վերափոխելով մայր բնությունը, կատարելագործելով այն, ինքն էլ վերափոխվում ու կատարելագործվում է:

Սահյանը գտնում է, որ միայն մարդու և բնության ներդաշնակ միասնության մեջ է մարդու զորությունը և հոգևոր հարստությունը.

Եվ ի՞նչ է տվել ինձ բնությունը,
Իր քարափների համբերությունը,
Իր խղճի առաջ իր գերությունը, իր անդունդների տարողությունը,
Սեփական վերքերն ապաքինելու կարողությունը…[2]

Մարդը ձուլվում է բնությանը և հաստատում է իր մեջ մարդկայինն ու մարդասիրականը: Բանաստեղծը հիմնավորում և ամրապնդում է մարդու և բնության դաշինքը:

Անխզելի կապ ստեղծելով բնության և մարդու միջև՝ Սահյանը մտերմորեն զրույց է անում նրա հետ, պատմում իր խոհերը, իր երկմտանքները, հարցեր տալիս ու սպասում պատասխանի.

Աշխարհն իմ մեջ է, և ես՝ աշխարհի,
Զրույց ենք անում աշխարհը և ես,
Եվ ոչ ոք չկա, որ մեզ խանգարի,

[1] Հ. Սահյան, Կանչե, կռունկ, Երևան, 1973 թ., էջ 354:
[2] Նույն տեղում, էջ 34:

Եվ ոչինչ չկա, որ խանգարի մեզ:[3]

Երբեմն բանաստեղծը հենակետ է ընտրում շնչավորված բնությունը՝ չբացելով փակագծերը և ընթերցողին թողնելով բնապատկերի վերծանությունը:

«Անտառում» բանաստեղծությունը բնանկար է անվանված, սակայն շատ հեռու է սոսկ բնապատկեր լինելուց:

Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում,
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:[4]

Աշնան նիրհող անտառը կենդանություն է ստանում, շնչավորվում, ձեռք բերում մարդկային վարքագծին բնորոշ հատկանիշներ: Բանաստեղծն ասես հասկանում է բնության լեզուն, ընթերցողի համար թարգմանում տերևի շրշյունը, սոճու և եղևնու խաղաղ զրույցը, անտառային կյանքի անշշուկ գաղտնիքները:

Սունկը, եղնիկը, որսկանը, փայտահատն ու անտառապահը, խարույկը, անտառին բնորոշ մթնոլորտ են ստեղծում և բացում սովորական աչքի համար անտեսանելի հարուստ մի աշխարհ.

Փայտահատը հին երգն էր կրկնում
Եվ տաք սղոցն իր յուղում էր կրկին,
Թեղին անտարբեր ականջ էր դնում
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:

Փիլիսոփայական հարուստ ենթատեքստ ունի նաև «Քամու համբույրը» բանաստեղծությունը: Փոքրիկ տերևը ալեկոծում է մի ողջ անտառ, իսկ կյանքում հաճախ է պատահում, երբ ոչնչից աղմուկ է առաջանում.

Խշշում է անտառն ու տարուբերվում,
Երկինք էր հասնում խշշոցը նրա,
Իսկ քամին ուրախ սուլում էր հեռվում
Եվ ծիծաղում էր անտառի վրա:[5]

Սահյանն ընգրկում է բնության ամենաբազմապիսի երևույթներ, երբեմն դա երաշտն է, փոթորիկը, անձրևը, անտառը, քարափները, ձորերը, երբեմն էլ արևաձագն է կամ մայրամուտը:

Քարափի վրա շողում է անվերջ

[3] Հ.Սահյան, Քարափների երգը , Երևան, 1968թ.:
[4] Հ. Սահյան, Կանչե, կռունկ, Երևան, 1973թ., էջ 103:
[5] Հ.Սահյան, Երկեր, Երևան, 1955թ., էջ 139:

Ոսկե բոցի պես թևը ծիծառի.

Կա՛նգ առ, հողագունդ, քո պտույտի մեջ

Թող մայրամուտը մի քիչ երկարի:[6]

Սահյանը, մտորելով մարդու անցած ուղու, նրա զորության ու թուլությունների, անկատարելության և հերոսական սխրանքների, մահկանացու լինելու ու անմահության ձգտման և նման բազմաթիվ հարցերի շուրջ, փորձում է մտորումների ու հարցականների պատասխանները գտնել հավերժ ու ներդաշնակ բնության մեջ.

Ինչի՞ց է, որ Հայաստանում

Ձրերը չեն հանգաստանում,

Այլ քարեքար ընկած այսպես,

Հնուց ի վեր, գժվածի պես,

Շառաչում են կիրճերն ի վար,

Եվ ճչում են տագնապահար:[7]

Սահյանի բնության մեջ ամեն ինչ շնչում է, ապրում, չկան անկենդան առարկաներ: Բույսերն ու կենդանիները մարդու պես ապրող ու զգացող էակներ են: Այս տեսակետից Սահյանը կարող է հիշեցնել Միսաք Մեծարենցին, որի բանաստեղծություններում ողջ բնությունը ապրում և զգում է: Բայց մի էական տարբերություն կա Մեծարենցի և Սահյանի երգերում: Մեծարենցի աշխարհում ամեն ինչ համակված է հովվերգական խաղաղությամբ, իսկ Սահյանի աշխարհում այդ խաղաղությունը չկա. Կռիվ է, կորուստ, անվերջ և դրամատիկական շարժում:

Սահյանը մի շատ հետաքրքիր բանաստեղծություն ունի՝ «Անձրև», որը կազմված է երեք մասից, և այդ մասերից յուրաքանչյուրը բնության մեջ տեղի ունեցած դրամայի երեք գործողություններն է ներկայացնում: Առաջինում՝ նախաամպրոպային լարվածությունն է, երկրորդը բուն անձրևն է, երրորդը՝ անձրևից հետո եկած խաղաղությունը.

Ի՞նչ կատարվեց…Երկնքում,

Քանդուքարափ է:

Ամպերը փուլ են գալիս,

Տեղատարափ է:[8]

Բնությանը նվիրված բանաստեղծությունների շարքում կան բանաստեղծություններ՝ նվիրված մասրենուն («Պտուղդ քաշող չկա», «Մասրենի»):

---

[6] Հ. Սահյան, Երկեր, Երևան, 1984 թ., էջ 137:
[7] Հ. Սահյան, Կանչե, կռունկ , Երևան, 1987թ., էջ 177:
[8]Հ. Սահյան, Երկեր, Երևան, 1984թ.:

Այստեղ մենք տեսնում ենք ոչ միայն բնության մի մասնիկը, այլև մարդուն, մարդկային ճակատագիրը.

Պտուղդ քաղող չկա,
Մասրենի, սարի մասրենի,
Պատիվդ պահող չկա,
Մասրենի, բարի մասրենի:
Կանգնել ես քո բարձունքին,
Մեկուսի, մենակ, մենավոր…
Իմ երես առած դարում
Դու լքված այրի, մասրենի:[9]

Մասրենին այլաբանորեն ներկայացնում է Հայաստանի պատկերը: Մասրենին դիմացել է ցուրտ հողմերին ու արհավիրքներին, «չի զիջել իր արմատը վերջին»:

Անմիջապես ծնվում է մասրենու և հայ ժողովրդի զուգահեռի միտքը, նրանց գաղափարը: Ինչպես մասրենուն հողմերն ու մրրիկները, այդպես էլ հայ ժողովրդին օտար նվաճողները հողմահարել են ու հարվածել, սակայն երկուսն էլ դիմացել են, մասրենին՝ «պիրկ պարանի նման արմատով կառչած քարե երկնքին», իսկ հայ ժողովուրդը՝ իր մի բուռ քարքարոտ տարածքին, երկուսն էլ անհող, բայց երկուսն էլ հզոր իրենց արմատով.

Կախվել է ժայռը անդունդի վրա
Եվ դարեր այդպես կախված է մնում,
Ձրերի մեջ են ոտքերը նրա,
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:
Չի զիջել նա իր արմատը վերջին
Արհավիրքների զարկին անխնա.
Ճոճվել է անգամ ճնճղուկի շնչից.
Բայց հողմի շնչին դիմացել է նա:

Բնության անձնավորումը և հողի ու մարդու միասնության գաղափարը առավել ցայտուն է արտահայտվել «Քարափը» բանաստեղծության մեջ:

Անձնավորված քարափը հիշեցնում է ժողովրդական մի նահապետի, որ արժանի սերն և հարգանք է վայելում բոլորի կողմից: Ինչպես նահապետն իր գերդաստանում, քարափն առանձնահատուկ տեղ ունի մանկության ձորում: Նա է կենտրոնը, նրա շուրջն են հավաքվում բոլորը.

[9] Հ. Սահյան,Պտուղդ քաղող չկա, http://armenianhouse.org/sahyan/sezam.html#030 (հասանելի՝ 05.11.2023 թ.):

Ծանր նստել է և ամեն մեկին
Իրեն արժանի պատիվն է տալիս.
Վայրի աղավնուն՝ հաճարը վայրի,
Մոլորված ամպին իր քիվն է տալիս,
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:

Այս արդարադատ, ազնիվ, առատաձեռն քարափը նստած է ձորում «նահապետորեն».

Մրջյունն իր ցավերն է պատմում նրան, մեղուն իր բողոքն է հայտնում, սիրտը կոտրված կաքավն իր առաջին սիրո հեծեծանքն է վստահում:

Եվ չսպասելով ընթերցողի կռահումներին՝ բանաստեղծը հայտարարում է.

Սատանան տանի, ինչ-ոչ հեռավոր
Նմանություն կա Խաչիպապ պապիս
Եվ այս հյուրընկալ քարափի միջև:

Խաչիպապը՝ հողի այդ անդադրում մշակը, իր անարատությամբ ու ինքնամոռաց ջանասիրությամբ նույնիսկ մահնէ հերքում:

Սահյանն իր մանկության տարիները հիշում է խոր տխրությամբ: Եվ այդ հողերում կրկին բարձրանում է պապի կերպարը:

Պապը գալիս է դաշտից Ծաղիկ եզան հետ: Համեստ է սեղանը, բայց վաստակած: Համեստ է կենցաղը: Սահյանն առանձին մանրամասներով է ներկայացնում գեղջկական տան պատկերը, տան իրերը, սփռոցը, որի շուրջը հավաքվում է մեծ ընտանիքը, գերանակապ տանիքը, սյունը: Ընթերցողը կարծես տեսնում է այս ամենը, գեղջկական ընտանիքը մի պահ վերակենդանանում է և ընթերցողին համակում իր պարզ գեղեցկությամբ: Բայց կա խոր տխրություն: Անցել է այս բոլորը, անցել անվերադարձ: Անցել են ոչ միայն հարազատ մարդիկ, այլև այն պարզ ու իմաստալից կյանքը, որով ապրել են այդ մարդիկ:

Հիմա այդ մեծ գերդաստանից
Ոչ մեկը չկա…
Ես եմ մնում լոկ իբրև հուշ
Եվ իբրև վկա:

Օրը մթնեց, ժամն է արդեն
Իրիկնահացի,
Տխրությունս կամաց-կամաց

Փոխվում է լացի:[10]

Բնանկարին հյուսված մի փոքր դրամա է «Ինչո՞ւ հիշեցրի» բանաստեղծությունը: Այն ծանր, տխուր մանկության մասին մի վիրավոր հուշ է: Ցուրտ ձմեռնամուտին պատանին՝ կիսամերկ ու ցնցոտիների մեջ, տավարն է արածեցնում.

Ես լուռ նստել եմ
Կապույտ մի քարի,
Կապտել եմ ես էլ,
Եվ կապույտ քարից
Տարբերվում եմ ես
Այնքանով միայն,
Որ ես դողում եմ,
Քարը չի դողում: [11]

Ծանր է տղայի վիճակը, բայց նա գիտակցում է իր գործի անհրաժեշտությունը, հասկանում է հոր զգացմունքները և խնայում նրան: Երբ ցախը շալակին՝ հայրը հարցնում է՝ ցու՞րտ է, տղան պատասխանում է՝ տաք է: Այս պատասխանի մեջ դիմացինին ցավ չպատճառելու ազնիվ մղում ու բարոյական վեհություն կա: Գյուղացի մարդիկ ժլատ են զգացմունքների դրսևորման մեջ, ահա թե ինչու հայրը կարճ հորդորում է՝ «Քարին մի՛ նստիր», բայց և գործի կարևորության գիտակցությամբ ավելացնում՝ «Տավարը լուսյով չբերես», որ նշանակում է, թե պետք է արածացնել մինչև մութն ընկնելը, մինչև կենդանիների կշտանալը: Հայրը մեղավոր չէ, կյանքի հոգսերն ու գյուղացու կոպիտ առօրյան են թելադրում նրա վարքագիծը, իսկ հոգու խորքում նա սիրում է զավակին: Տարիներ անց մեղքի զգացումը, խղճի խայթը, թե հոր սրտում անթեղված ցավը վերածվում է լացի.

Անցել է ուղիղ
Քառասուն տարի:
Հիշեցրի երեկ,
Հայրս լաց եղավ:[12]

---

[10] Հ. Սահյան, Երկեր, Երևան, 1984 թ., էջ 290:
[11] Հ. Սահյան, Ինչո՞ւ հիշեցրի, https://katalog.am/grakanutyun/show-htm-itemid-1071.html (հասանելի՝ 05.11.2023 թ.):
[12] Նույն տեղում:

Թեև մեղավոր չկա, բայց հայրը լացով ստորագրում է իր մեղքը, որը նաև ժամանակինն է ու միջավայրինը: Իսկ որդին մորմոքում է՝ «Ինչո՞ւ հիշեցրի»:

Թախծոտ այս պատմության մեջ բանաստեղծը հարազատորեն վերարտադրել է նահապետական գյուղի մարդկանց հոգու լռին ցավերը, անչար տխրությամբ արթնացրել անցյալի հուշերը: «Անձնավորված, մարդացած բնության և բնական մարդ. ահա իմ հավատո հանգանակը կյանքում և արվեստում», -մի առիթով ասել է Հ. Սահյանը:

Հետևելով բնության երևույթներին, ներդաշնակ օրինաչափություններին՝ բանաստեղծը ցանկանում է այդ անխախտ ներդաշնակությունը տեսնել և մարդու մեջ.

Հանիտենության լծորդն եմ անդուլ,
Բայց և կարճատև մի ակնթարթ եմ,
Փոթորիկներ են հատակիս,
Թեև ներսից այնպես հանդարտ եմ:

Սահյանը ձգտում է մարդու էության մեջ դրված հավերժ ճշմարտությունների բացահայտմանը: Ժամանակի հետ մարդը փոխվում է, սակայն մարդու էության մի շարք գծեր բոլոր ժամանակներում մնում են անփոփոխ:

«Քարափների երգը» ժողովածուի «Իջավ սարյակը դաշտում» բանաստեղծության ութ տողերի մեջ ամփոփված է մի ամբողջ կյանքի պատմություն.

Իջավ սարյակը դաշտում- ծիլ էր
կտուցին.-
Շուրթիս վրա մի կանաչ տող էր
թպրտում:
Արտից տատրակը թռավ- հասկ էր
կտուցին.
-Շուրթիս վրա մի կարմիր տող էր
թպրտում:
Ծիծառն անցավ երկնքով- ամպ էր
կտուցին.-
Շուրթիս վրա մի դեղին տող էր թպրտում:
Կռռաց ագռավը ձորում- ձյուն էր
կտուցին.-
Սրտիս վրա մի ճերմակ դող է

թպրտում:[13]

Փոխվում են որոշ բառեր, բայց այս սեղմության մեջ կան նաև չասված բառեր, երևույթներ ու կերպարներ:

Գլխավոր կերպարը մարդն է, բայց նա սովորական էակ չէ, այլ բանաստեղծ. դա զգացվում է «տող» բառից: Տրված է մարդու կարճատև կյանքի ընթացքը տարվա եղանակների արագ հերթագայությամբ, բայց չկան գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերը. դա կռահում ենք կանաչ-կարմիր-դեղին-ճերմակ քառանիստ գունապատկերից:

Ապրումների անկեղծությամբ, անսահման բարությամբ ու հավաշտի շնչով են պապուրված Սահյանի նաև սիրո երգերչը: Դրանք այնքան յուրօրինակ են, որ սովորական առումով դժվար է նույնիսկ սիրերգություն անվանել: Բանստեղծին մեծապես հուզում է երկու հոգիների մերձեցման ճանապարհը: Զգացմունքին միաձուլվում է նաև բանության պատկերի բանաստեղծական ընկալումը.

Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու,
Չորս հոգով էինք, էլ ոչ ոք չկար,
Թե իմանար մեզ ինչից է զրկում,
Առավոտն ինքն էլ երևի չգար:
Մենք մեզ իրար մեջ որոնում էինք,
Դաշնությունն էինք հյուսում մեր հոգու,
Աստղերից կախված օրորվում էինք…
Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու…[14]

Սիրո մեջ Սահյանը, փնտրում է ինքնազոհություն՝ «Հանդիպման օրից ես ինձ նեղել եմ, որ դու աշխարհում նեղություն չզգաս»: Սիրո չափանիշը նրա համար ինքնանվիրումն է.

Տվել եմ, չեմ առել ոչինչ,
Շնորհ էր շիկնելդ,
Եվ ոչինչ հարկավոր չէր ինձ,
Հերիք էր լինելդ:[15]

Սահյանն անդրադարձել է սիրո հոգեբանական տարբեր դրսևորումների, արտահայտել կարոտի, ցավի, հիասթափության, դառնության, հանդիպման ու բաժանման հուզական տրամադրություններ.

Ծովին հասանք և գտանք,

---

[13] Հ. Սահյան, Երկեր, Երևան, 1984 թ., էջ 192:
[14] Նույն տեղում:
[15] Հ. Սահյան, Կանչե, կռունկ, Երևան, 1973 թ., էջ 302:

Ինչ որ բախտն էր մեզ տալու,
Բայց չիմացաբնք, որ արդեն
Կորցրել ենք իրարու:[16]

Քնարակամն հերոսի սիրո դրամայի մասին է պատմում «Դու իմ կյանքն էիր» բանաստեղծությունը:

Դու իմ կյանքն էիր, կյանքի գինն էիր,
Լավագույն էիր ամենքի մեջ:
Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր,
Իմն էիր միայն իմ երգի մեջ:[17]

Սիրո համար հատկապես ցավագին է բաժանման պահը, որը լի է անորոշության սիրտ ճմլող տագնապով, սպասման տառապանքնով ու կրիկն հանդիպման հւոյսով: Բաժանման պահի այդ տագնապն է մարմնավորել գրողի «չես ասի ոչ մի բառով» բանաստեղծոթյան մեջ.

Ա՛խ, նորից ,Բարի ճամփաե,
Ա՛խ նորից ,Մնաս բարովե…
Մի տեսակ տագնապ կա, որ
Չես ասի ոչ մի բառով:

Զգացմունքը հաճախ անթարգմանելի է, և գրողը ճիշտ է գտել ձևակերպումը՝ «Չես ասի ոչ մի բառով»: Բանաստեղծության մեջ ցավ կա բաժանման համար, և կա հակադիր զգացմունքների մի խառնուրդ, որն արտահայտվում է նույնքան հակադիր մի վարքագծով՝ լացի ու ծիծաղի միջոցով.

Ներիր ինձ, դու իմ բարի,
Իմ խելոք և իմ համառ,
Հարկադիր այս ծիծաղի
Եվ թաքուն լացի համար:[18]

Սահյանի պոեզիայի գլխավոր կերպարը Հայաստանն է, նրա անցյալն ու ներկան, պատմությունն ու գալիքը: Սահյանի երգած Լորագետը, Որոտանը ու Գլազբելը հենց Հայաստան է, Հայաստանն է, Երևանը, Արարատյան դաշտը:

Հայաստանի խորհրդանիշներն են բարդին ու փշատենին, ժայռերը, քարերը: Նույնիսկ բնության սովորական երևույթները այլ գույն ու երանգ են ստանում Հայաստանում, ուրիշ բնավորություն ունեն գետերը, քարափները, հաղարջի ու

[16] Նույն տեղում, 231:
[17] Նույն տեղում, էջ 318:
[18] Նույն տեղում, էջ 282:

մոշի թփերը: Ամբողջ բնաշխարհը, որ երգում է Սահյանը, լեռնային է ու հայկական, և մարդիկ, որ ապրում են ու արարում են այդ երկրում, հայ են: Սահյանի պատկերած աշխարհը խորապես ազգային կնիք ունի:

Երբ կարդում ես «Անունդ տալիս» բանաստեղծությունը. Պատկերացնում ես տաճարներով, մատուռներով և ժայռափոր տներով հայաստանիր բնանկրը, որը ծանր ու դժվար պատմության հետևանքն է.

Հայաստա՛ն, անունդ տալիս,
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում,
Ալևոր կամուրջի հոնքին
Ծիծեռի մի բույն եմ հիշում,
Թեքված մի մատուռ եմ հիշում
Եվ բերդի տեղահան մի դուռ,
Ավերակ տաճարի մի վեմ
Եվ բեկված մի սյուն եմ հիշում:

Բնապատկերի իմաստավորման տեսակետից այս բանաստեղծությանը մոտ է «Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը, որը կառուցված է հնի ու նորի հակադրության սկզբունքով: Հնին բնորոշ էր «Մի փշոտված փշատենի, մի հոշոտված խաղողի որթ», «Մի մենավոր ծիրանի ծառ», «Մի խրճիթի աղոտ չճրագ», «Մի Սասնա տան Թուր Կայծակի Դավթի հզոր ձեռքերի մեջ» և այլ պատկերներ, որոնք խորհրդանշում են Հայաստանի ծանր պատմությունը և որին հակառակ՝ նորը ներկայացվում է փառքի ու հաղթանակի պատկերներով, քանի որ Հայաստանը մարմին է տվել իր դարավոր, իր փառավոր երազանքին:

Համո Սահյանը խորապես ազգային բանաստեղծ է, բայց ազգայինը նրա պոեզիայի մեջ կենդանացող հայկական լեռնաշխարհը չէ սոսկ, և հայրենիքը միայն տարածք չէ: Հայրենիքը նաև հոգեկան, մշակութային արժեքների ամբողջությունն է, ու այդ ամենը կրումը սեփական հոգում:

Հայրենիքը գոյություն ունի ոչ միայն մարդուց դուրս, այլ նաև նրա ներսում, նրա աշխարհընկալման ձևի ու եղանակի մեջ: Այդպիսի ըմբռնման լավագույն արտահայտությունն է «Ախր ես ինչպե՞ս» բանաստեղծությունը:

Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա:

Հայրենն ու հորովելը, ձյան մեջ արևն ու արևի մեջ ձյունը, ինքնամաքառումը և բանաստեծության մեջ թվարկվող այլ հատկանիշներ քնարական հերոսի էության մեջ են, որոնցից զրկվելը հավասար է սեփական ես-ը կորցնելուն, ուստի հասկանալի է բանաստեղծի ընդհանրացումը:

Ախր ես ինչպես ապրեմ առանց ինձ[19]:

Հայաստանի նկատմամբ իր հուզական ջերմ վերաբերմունքն է արտահայտում Սահյանը Հայաստան ասելիս քնարական բանաստեղծության մեջ:

Հայաստան ասելիս տարբեր զգացողությունն է ունենում բանաստեղծը, շրթունքը ճաքում է, հասակը ծաղկում է, ծնկները ծալվում են… Եվ զարմանում է, թե ինչու է այդպես: Բայց բոլորն էլ գիտեն, որ դրանք անսահման սիրո վառ արտայատություն են.

Հայաստան ասելիս աչքերս լցվում են,

Հայաստան ասելիս թևերս բացվում են,

Չգիտեմ ինչու է այդպես:

Հայաստան ասելիս աշխարհը իմ տունն է,

Հայաստան ասելիս էլ մահը ո՞ւմ շունն է…

Կմնամ, կլինեմ այսպես:

Հայրենի հողն ու տունը եղել են այն ակունքը, որտեղից նա թափ է առել, լիցք ստացել դեպի բարձունքները սավառնելու.

Աշխարհում ամենից առաջ

Դու հող ես, երկինք ու արև,

Ինձ համար քեզանով է միայն

Այս աշխարհն աշխարհ արդարև:[20]

Հեղինակը վերհիշում է իր հայրենիքի պատմական անցյալը, ունի պարտքի զգացում հայրենիքի նկատմամբ և երազանք հայրենիքի ապագայի մասին:

Հայաստանի մասին են պատմում նրա քարերը, որոնք վանքի ու ոստանի, սարերն իր վար հոսող, երկինքն ի վեր խոսող, պարիսպներից պոկված և փորձանքներում փորձված քարեր են: Այդ քարերը ոչ միայն հազարամյա մեր խորհրդի ուղեկիցն են եղել, այլև մեր ապագայի խորհրդնիշն են.

Իմ սրտի մեջ, իմ երգի մեջ

Բեկված քարեր Հայաստանի,

Մեկը մեկին դարձած վահան,

Դարձած և բախտ, և Երևան,

Ծիածանի յոթ գույներով

Ներկված քարեր Հայաստանի:[21]

---

[19] Նույն տեղում, էջ 182:
[20] Նույն տեղում, էջ 189:
[21] Նույն տեղում, էջ 170:

Ծանր ու դժվարին է եղել հայ ժողովրդի պատմական ուղին՝ լի տագնապներով ու հույսերով, փորձություններով, բայց նաև փառապանծ վերածննդով: Բոլոր տառապանքներին ու կոտորածներին հայ ժողովուրդը հակադրել է ապրելու, կառուցելու, ստեղծագործելու իր կամքը և դրանով իսկ հաղթել թշնամուն: Ժողովրդի պատմական բազմաչարչար այդ երթը մի ամբողջ աշխարհ է Սահյանի համար:

Որտեղի՞ց է եկել, ի՞նչ ճանապարհ է անցել և ո՞ւր է գնում իր ժողովուրդը. սա է Սահյանի հայրենիերգության առանցքը:

Մտածել ժողովրդի ճակատագրի մասին, ճիշտ ուղի գտնել ապագայի համար՝ սա է իսկական հայրենասիրությունը: Հայաստանի ապագայի նկատմամբ մեծ լավատեսությամբ է համակված «Գարունդ հայերեն է գալիս» բանաստեղծությունը: Այստեղ Հայաստանի ներկան և ապագան միահյուսված են: Եվ այդ միասնությոն մեջ էլի մարդն ու բնությունն են: Հայաստանը շատ բան կորցրել է, բայց չի մահացել, ուղղել է մեջքը և շարժվել է առաջ ու շարունակում է ապրել բաց ճակատով: Եվ շարունակելու է ապրել ու հայեցի է ապրելու.

Թող աստված եղածը պահի,
Եվ հետո ինչ ել պատահի,
Ձյուներդ հայերեն են լալու,
Գարունդ հայերեն է գալու,
Հայերեն են գալու դարերդ[22]:

[22] Նույն տեղում, էջ172:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Բնության սահյանական պատկերումը ավելին է, քան պարզապես նկարագրությունը. այն հայելի է, որն արտացոլում է մարդկային ներաշխարհի բարդությունները: Բնության տարրերը անձնավորելու բանաստեղծի կարողությունն ընդգծում է նրա հավատը մարդու և շրջակա միջավայրի անքակտելի կապի նկատմամբ:
- Սահյանի անմնացորդ նվիրվածությունը հայրենի բնաշխարհին այն կենտրոնական թեմաներից է, որը ցույց է տալիս մշակութային և ազգային ինքնության խորը ազդեցությունը նրա ստեղծագործության վրա: Հայրենիքը ծառայում է ոչ միայն որպես ֆիզիկական տարածք, այլև որպես պատմության, հիշողության շտեմարան, ստեղծագործական ոգեշնչման աղբյուր:
- Սահյանի պոեզիան Հայաստանի փոթորկալից պատմության ցայտուն տարեգրություն է, որը ներկայացնում է դժբախտությունների դեմ հայ ժողովրդի տոկունությունն և անկոտրուն ոգին:
- Բանաստեղծի առանձնահատուկ ոճը, որը բնութագրվում է պատկերավորման յուրօրինակ միջոցների օգտագործմամբ, հուզական արձագանքով և փիլիսոփայական խորությամբ, նրան դարձնում է հայ գրականության անդաստանում մնայուն տեղ ունեցող հեղինակ: Անձնականը համընդհանուրի հետ միաձուլելու Սահյանի կարողությունը թույլ է տալիս նրա գրականությանը հաղթահարել ժամանակային և մշակութային սահմանները:
- Համո Սահյանի պոեզիան վկայում է գրականության մնայուն ուժի մասին: Իր բանաստեղծություններում բնությունը, սերը և հայրենիքը միահյուսելու նրա կարողությունը խորապես պատկերացնել է տալիս հաղորդում անհատական և հավաքական ինքնության փոխազդեցության մասին:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հ. Սահյան, Ինչո՞ւ հիշեցրի, https://katalog.am/grakanutyun/show-htm-itemid-1071.html (հասանելի՝ 05.11.2023 թ.):
2. Հ. Սահյան, Կանչե, կռունկ, Երևան 1973 թ.:
3. Հ. Սահյան, Երկեր, հատոր 1, Երևան, 1975 թ.:
4. Հ. Սահյան, Երկեր, հատոր 2, Երևան, 1975թ.:
5. Հ. Սահյան, Քարափների երգը, Երևան, 1968 թ.: